# ՀԱՄԲԱՒԱԲԵՐ ՌՈՒՍԻՈՅ

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

ՀԱՄԲԱՒԱԲԵՐ ՌՈՒՍԻՈՅ լրագիրը հրատարակւում է իւրաքանչիւր ամսի 10 ին և 20 ին. տարեկան գինը ՃՈՒ-ՔԱՂԻ հետ 'ի միասին է 5 ռուբ. արծաթ. իսկ կէս տարուանը 3 ռուբ. արծ. կանխիկ վճարելի:

ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10 — Հ. 9 — 1861 ԱՄԻ


## ՄԷԹԹՐԷԻ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԸ

Գաղղիայում՝ ոչ այնքան հեռի Թուռ քաղաքից՝ կայ հաստատուած 1839 թուականէն երկրագործական գաղթականութիւնն Մէթթրէի (Mettray), ուր ընդունւում են տասն և վեց տարեկանից պակաս այնպիսի մանուկներ, որք յանցանաց համար դատապարտուած են լինում, բայց պատժից ազատուած՝ մանկական հասակի պատճառաւ: Այդ գաղթականութիւնը ունի այն նպատակը, որ տայ մատաղ գաղթականներին բարոյական և կրօնական կրթութիւն, նոյնպէս և սկզբնական ուսմունք, այն է՝ ուսուցանել նոցա որպիսի և իցէ արհեստներ, զարթուցանել նոցա սրտում սէր և փափագ առ երկրագործութիւն, յետոյ տեղաւորել նոցա՝ գիւղերից մէջ, արհեստաւորաց և երկրագործաց մօտ, և վերջապէս դիտողութիւն ունենալ նոցա վարուց վերայ և պաշտպան և օգնական լինել յընթացս քանի մի ամաց յետ ելանելոյ նոցա գաղթականութիւնից:

Այդ յոյժ օգտակար և մեծ օգուտ բերող գաղթականութիւնը հաստատեցին Հայրական Ընկերութեան (Société Paternelle) օգնականութեամբը Պ. Տէմէթցը (Demetz) և Պ. Պրեթինէր տը Քուրթիլը (Bretignères de Courtilles), որք և ցոյց տուին գործքով՝ թէ կրթութիւնը ի՞նչ զօրութիւն ունի մարդոյս մաքրացութեան համար: Որովհետև այդ գաղթականութեան մէջ ամենավատ բնութեամբ տղայքը դառնում են յուղղութիւն, և լինում են օրինաւոր մարդիկ, իւրեանց ընտիր վարժապետաց ջանիւքը, որք ամենայն հնարք՝ թէ արդարութիւն, թէ քաղցրութիւն, և թէ խստութիւն 'ի գործ են դնում նոցա կրթութեան համար:

Գաղթականութեան հաստատուած օրից ուղարկուած 670 տղայոց միջէն 144ը ապօրինաւոր ծնունդք են եղած, 151 տղայոց ծնողքն դատւում են եղած բանտում, և 90ը ծնած են եղած իւրեանց հօր երկրորդ ամուսնութիւնից: Այս հաշուից ընթերցողը լաւապէս կարող է մտաբերել՝ թէ որպիսի




Այսուհետև ժամանակ ժամանակ կզարդարենք մեր լրագրի էջերը վայելուչ պատկերներով: Շատ ցանկալի էր մեզ փոխանակ Եւրոպական պատկերների տպագրել ազգային պատկերներ, բայց դորա համար հարկաւոր էին ոչ այնքան բաժանորդ որքան մենք ունիմք, այլ գոնեա հինգ հարիւր: Խմբագիր:

տղայք են եղած նոքա այդ գաղթականութեան մէջ մնալու ժամանակին, և ինչ տեսակ մոլեկան կիրքեր և բարոյական թերութիւններ կարող էին ունենալ:

Այն գաղթականութեան տեղը և նորա մէջի ուսումնարանի ձևակերպութիւնը երևեցուցանում է լրագրիս առաջին երեսում դրոշմեալ պատկերն:

## Հ Ա Մ Բ Ա Ւ Ն Ե Ր

1861. Նոյեմբեր 23.

Տփխիսից տխրալի և յոյժ ցաւալի լուրեր են հասանում մեզ: Հազիւ ուրախացած էինք՝ թէ ահա ամենայն երկպառակութիւն և կուսակցութեան հոգին վերջացան Տիփլիսու և նորա Հոգևոր դպրոցի մէջ, հազիւ թէ սկսած էինք յուսալ բարի բարի համբաւներ ստանալու այդ տեղից, որ «պարարէին մեր ոսկերքը», յանկարծ ամենայն ինչ պղտորւում, և ալեկոծւում է: Ուրեմն մեր այդ զուարճալի զգացմունքները միայն բոպէական, միայն մին գիշերուայ երազ էին: Ափսոս Հոգևոր դպրոցին, ափսոս նորա երջանկայիշատակ Հիմնադրի մեծավաստակ աշխատութեանը: Մեք մտադրութիւն չունինք քննելու և վճռելու՝ թէ երկու կուսակցական բաժնից ո՞րը արդար է և ո՞րը մեղաւոր, կամ ո՞ր կուսակցական բաժնի առաջարկութիւնը օգտակար է, և որինը վնասակար: Մի բան միայն նշմարւում է այդ երկպառակութիւնից՝ թէ երկու կուսակցական բաժինները ևս չեն մտածում հասարակաց ազգային օգուտը, վասն զի եթէ մտածած լինէին նոքա՝ երբէք այդ վիճակին չէին հասուցանել ուսումնարանը, և՚ի մի սիրտ և՚ի մի հոգի կկապուէին ամենքն: Ասացէք՝ խնդրեմ՝ ի՞նչ օգուտ և ի՞նչ շահ այդպիսի անհամաձայնութիւններից: Բայց ՚ի վնասուց այլ բան կա՞յ. ասացէք: Եթէ մեր ազգը կամենայ իմանալ մեր կարծիքը այդ մասին, այս է. Ներսիսեան Ուսումնարանը երբէք կանոնաւորուելու և ժողովրդեան մէջ տրտունջը և տարաձայնութիւնը վերջանալու չէ, մինչև որ այդ ուսումնարանը ըստ ամենայնի չորոշուի՝ թէ ի՞նչ ուսումնարան է. Հոգևոր, թէ՝ Աշխարհական: Եթէ Հոգևոր, ուրեմն թո՛ղ հոգևորները միայն խառնուէին նորա կառավարութեանը, աշխարհականները գործ չունէին, թէև ժամանակ ժամանակ նուիրատու եղած են նորան. ինչ որ տուած է մի անգամ, նորան կրկին յետ չէս բերելու: Իսկ եթէ Աշխարհական, թո՛ղ ուրեմն հոգևորները ձեռքերնին լուանան նորանից: Բայց ասենք թէ այդ ուսումնարանից հոգևորները ձեռք վեր առին, և եղաւ նա ըստ ամենայնի Աշխարհական դպրոց, ի՞նչ էք կարծում, դորանով բանը կվերջանա՞յ, խռովութիւնը կպակասի՞. ո՛չ, և ամենևին ո՛չ, այլ կյառաջանան այն ժամանակ այլ խնդիրներ, որ դուցէ մեր պատուելի համազգիքը մտածած ևս չէին:

Թողէք ուրեմն, պատուելի Տփխիսեցիք, այդ ուսումնարանը Հոգևոր իշխանութեան ներքոյ, թողէք որ լինի նա միայն Հոգևոր դպրոց՝ Հոգևոր իշխանութեան ներքոյ, թողէք այդ հոգողութիւնը Վեհափառ Սրազնակատար Կաթուղիկոսին, նա լաւ գիտէ իւր ազգի պիտոյքը, դուք ձեռք վեր առէք այդ ուսումնարանից, և մի խառնուիք նորա գործքերին, որ խաղաղութեան մէջ մնալով ծաղկի և պտղաբեր լինի: Իսկ եթէ դուք անպատճառ կամիք խառնուիլ ուսումնական գործքերի (որ գեղեցիկ և գովելի բան է) շինեցէք ձեր համար առանձին ուսումնարան, որի մէջ դուք միայն ձայն կունենաք (եթէ կարողանաք ունենալ) և հոգևորները առաւել արգելառիթ չեն լինելու մեր ազգի յառաջադիմութեանը, որպէս կարծում են քանի մի պատուելիք:

---

### ՊԱԼԱՏԱԿԱՆ

Նոյեմբերի 7 ին ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԲԱՐՁՐՈՒԹԻՒՆՆ ՄԵԾ ԻՇԽԱՆՈՒՀԻՆ ԵԼԵՆԱ ՓԱՒԼՈՎՆԱՅՆ վերադարձաւ ՚ի Ս. Փեթերպուրկ՝ յօտար սահման արած իւր ճանապարհորդութիւնից:

### ՏԵՐՈՒԹԵԱՆ

ԹԱԳԱՒՈՐ ԿԱՅՍՐՆ Բարձրագոյնս բարեհաճեցաւ թոյլատրել Թէոդոսիոյ Խալիպեան վարժարանի օտար տէրութեանց հպատակ աշակերտաց, ևս և նոյն վարժարանի և նորա տպարանի մէջ ծառայող՝ օտար տէրութեանց հպատակ՝ անձանց, որպէս բացառութիւն ՚ի տէրութեան կանոնաց (554 ст. XIV Т. уст. о насп. Св. Зак. изд. 1857), ստանալ ՚ի տեղական կառավարութենէ գլխագիր. առաջնոց՝ վեց տարի ժամանակի համար, իսկ վերջնոց՝ միայն այնքան ժամանակի համար, որ վարժարանը կընդունի իւր ծառայութեանցը:

— ԹԱԳԱՒՈՐ ԿԱՅՍՐՆ ըստ ամենահպատակ յայտարարութեան Նախարարին Տէրութեան եկամտից, Սեպտեմբեր ամսի 29 ին, Բարձրագոյնս բարեհաճեցաւ հրամայել. Տէրութեան շարունակաբար շահ բերող տոմսակներին (Государственные непрерывно-доходные билеты) ստորագրուելու ժամանակը ընդերկարել մինչև Մայիսի 1, 1863 թուականի:

— ԹԱԳԱՒՈՐ ԿԱՅՍՐՆ ըստ առաջարկութեան կառավարչի Նախարարութեան ներքին գործոց, և համաձայն հաստատութեան Նախարարաց ժողովոյն, Հոկտեմբերի 3 ին ներկայ տարւոյս, ամենողորմածաբար բարեհաճեցաւ վարձատրել Գրիգորիապոլու քաղաքացի Մարտիրոս Նալբանդեանց 1860 թուականին Նովորօսիյսք և Պեսսարաբիա նահանգների մէջ մարախը սատակեցընելու ունեցած իւր աշխատութեան մասին՝ արծաթեայ Մետալով, վերայն «за усердіе» վերնագրով, Ստանիսլաւեան ժապաւէնաւ, վզից կախելու համար:

— Բարձրագոյն հրամանաւ ՚ի 25 էն Հոկտեմբերի՝ Երևանու զինուորական քաղաքապետ՝ Կէներալ Մայոր Քուսաքով առաջինը, որ կառավարող էր և քաղաքական մասնի, հիւանդութեան պատճառաւ արձակուեցաւ իւր պաշտօնից մունտիրով, և մշտնջենաւոր թոշակով:

—Կառավարողն Նախարարութեան ներքին գործոց Սթատս-Սէկրէտար ներքին խորհրդական Վալուեւ՝ Բարձրագոյն հրամանաւ որ յ9 էն Նոյեմբերի՝ Նշանակուեցաւ Նախարար ներքին գործոց:

— Բարձրագոյն հրամանաւ, որ նոյնպէս յ9 էն Նոյեմբերի, Զինուորական Նախարարն Կէներալ-Ատիւթանդ Սուխոզանէթ արձակուեցաւ իւր պաշտօնից, և նորա տեղ նշանակուեցաւ Նախարարի օգնականն՝ Կէներալ-Ատիւթանդ Կէներալ-Լէյթէնանդ Միլիւտին:

— Դարձեալ նոյն օրը եղած Բարձրագոյն հրամանաւ Տաղստանու մշտակայ միլիցիայի տեսուչ՝ Մայոր Երիստովեան-Արղութեանց ամբարձաւ փոթփոլքովնիկի աստիճան:

### ԱԶԳԱՅԻՆ

ԳՕՐԻ (Նամակ). Հետ զհետէ քանի որ մեր սիրելի Համազգեաց ուսումնական փառաց և երջանկութեան պանծալի պատկեր կ'ներկայանայ մեր աչաց առաջև, քանի որ Ազգերնուս դպրոցական յառաջադիմութեան օր քան զօր յառաջ խաղացումն կ'տեսանեմք, և նորա իրաւացի յուսովը կ'զուարճանամք քաղցր և միանգամայն Ազգասիրական պարտք կ'համարիմք մեզ՝ մեր խոստման համաձայն՝ հաղորդել Ձեր Հայրենավառ սրտին այն յաւերժական յիշատակաց արժանի դէպքերը, որոնք կ'պատահին սոյն դպրոցների մէջ ՚ի նշան լուսաւորութեան և ՚ի խրախոյս հրակայծեմ ընթացից Հայկազն մանկտոյն: Ահա այսպիսի երջանկաւէտ նշանաւոր դէպքերից մէկն եղաւ նորին բարձր Սրբազնութեան Թեմին Վրաստանի և Իմերէթի վիճակաւոր առաջնորդին Տեառն Սարգսի Արք Եպիսկոպոսի՝ Գօրւոյ Հոգևոր ուսումնարանին արած շնորհաբեր այցելութիւնն. որոյ ճիշդ նկարագրութիւնը կ'փութամ համառօտիւ արձանացուցանել Ձեր Հայրենաբաց աչաց հանդէպ որ Ձեր պատուական լրագրոյն միջոցաւ հրատարակէք ՚ի բերկրութիւն սրտի մեր ուսումնասէր Համազգեաց:

Երբ որ նորին բարձր Սրբազնութիւնն

